ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Ավտոմայրուղին յգվում է լեռներն ի վեր. իջնում. ապա նորից բարձրանում. Մայրուղուց բարակ առուների նման պոկվում են նեղլիկ բարակ ճանապարհներ. որոնք գնում. հասնում են լեռներին ու ժորակներին թիկնած հայոց շեները. նրանց կապում մայր ճանապարհին. Այդ ճանապարհի եզրերին զոհված տղաների անմահությունը խորհրդանշող խաչքարեր են. հուշաքարեր. որոնք փխրության ու թախիծի հետ նաեւ հպարտություն են ծնում.

Ճանապարհը տանում է Զանգեզուր աշխարհ. Զորամաս մեկնելու առիթը զինվորի հայր Բորիկ Կոստանյանի եւ նրա քույր՝ Ամալյայի այցն էր խմբագրություն. Բորիկը մասնագիտությամբ բժիշկ է. մինչ Շահումյանի հայաթափումը աշխատել է այնտեղ. որպես բժիշկ. օրհասական ծանր պահերին բազմաթիվ ազատամարտիկների կյանք պարգեւել. օգնել. սատար կանգնել: Քույրը՝ Ամալյան նույնպես բժիշկ է. Լինելով Սեւքար գյուղի ծնունդ. առաջին իսկ օրերից նա նույնպես սահմաններում էր. ազատամարտիկների կողքին.

Բորիկ Կոստանյանի որդին ծառայում է գեներալ-մայոր Լեւոն Երանոսյանի հրամանատարությամբ գործող զորամիավորումում. Շուտով տղան՝ Կարենը. կզորացրվի. Անսովորն այն էր. որ հիմնականում ծնողները իրենց շնորհակալությունը հայտնում են որդիների ծառայության ընթացքում. որպեսզի հրամանատարը «բարի աչքով» նայի իրենց զավակներին. Բորիկ Կոստանյանը այսպես պատասխանեց. «Ճիշտ է որդիս շուտով կզորացրվի. սակայն՝ մյուսների ծառայությունը շարունակվելու է. Մեկ ամիս է ինչ գումարտակի (որտեղ ծառայում է որդիս) հրամանատար է նշանակվել ավագ լեյտենանտ Վաղինակ Մահտեսյանը. Այս մեկ ամսում գումարտակում ես զգացի զգալի տեղաշարժ. թե բարոյահոգեբանական եւ թե գումարտակի ընդհանուր կազմակերպչական հարցերում. Ես վստահ եմ. որ նրա հրամանատարությամբ գործող գումարտակում ծառայող զինվորները կզորացրվեն բարի հիշողություններով ու իսկական հայրենասեր զինվորներ դարձած».

Առանցին մոտոհրաձգային երկրորդ գումարտակի հրամանատար. ավագ լեյտենանտ Վաղինակ Մահտեսյանը ծնվել է 1966թ. ապրիլի 17-ին: Նախնիները Էրզրումից գաղթել են Ջավախք. որտեղից էլ 1959-ին նրանց ընտանիքը տեղափոխվել է Էջմիածնի Ջրառատ գյուղ: Երեք եղբայր են. մեկ քույր:

Ավարտելով Ջրառատի միջնակարգ դպրոցը ընդունվել է Երեւանի ֆիզկուլտուրայի ինստիտուտ: Ազատ՝ ոճի ըմբշամարտի գծով սպորտի վարպետ է: Հայաստանի. ինչպես նաեւ Ռուսաստանի մրցումներում նվաճել է չեմպիոնի կոչում: 1984-86թթ. ծառայել է խորհրդային բանակում: Վերադառնալով շարունակել է ուսումը՝ զուգահեռ զբաղվելով նաեւ մարզական աշխատանքով: Ազգային զարթոնքի առաջին իսկ օրերից մասնակցել է հայրենի սահմանների պաշտպանության գործին: Մեկ ամիս է. ինչ գումարտակի հրամանատար է: Ամուսնացած է. ունի երեք երեխա՝ երկու տղա. մեկ աղջիկ:

«Մահտեսյանները փոքր ազգություն են. Հայաստանում ապրող բոլոր Մահտեսյանները ազգականներ են՝ հիմնականում բժիշկներ. իրավաբաններ. ես էլ զինվորականի մասնագիտությունը ընտրեցի: Այս բոլոր մասնագիտություններն էլ պատասխանատու են եւ պատվաբեր».-իր կարճ կենսագրականը այսպես ավարտեց գումարտակի հրամանատար.ավագ լեյտենանտ Վ. Մահտեսյանը:

Տարածքը. որտեղ տեղակայված է զորամասը կոչվում է Զանգեր: Այս անունը երեւի կապ ունի այն հրաշալի ավանդապատումի հետ. ըստ որի՝ ամեն անգամ օրհասական պահերին ի լուր հայոց շեների հնչել են զանգերի ղողանջները՝ ոտքի հանելով հայոց քաջերին: Այստեղ հանդիպեցինք փոխգնդապետ Նիկոլ Առուստամյանին. որը եղել է գումարտակի առաջին հրամանատարը: Նրա պատմությունն. ասես. ավանդապատումի շարունակությունը լինի. «Տղաներն այստեղ էին հավաքվում ու մեկնում սահմաններ. որտեղ ահեղ մարտեր էին.-ապա ցույց տալով հրամանատարի աշխատասենյակին կից փոքրիկ սենյակը. ավելացրեց.-անքուն ու անդադար աշխատում էր Վ. Մարգսյանը. մի ոտքը սահմաններում էր. մեկն այստեղ՝ ոգի ու հավատ էր ներշնչում ռազմադաշտ մեկնող տղաներին: Երբ օրվա մեջ հոգնած. ուզում էր մի փոքր հանգստանալ. մտնում էր այս փոքրիկ սենյակն ու կարճ ժամանակից նորից ոտքի վրա էր»:

Գումարտակի ստեղծման առաջին իսկ օրերից փոխվել են հրամանատարները եւ այսօր. ինչպես նշել ենք. այն ղեկավարում է ավագ լեյտենանտ Վ. Մահտեսյանը.

-Գումարտակի հրամանատարությունը դժվարին միեւնույն ժամանակ պատվաբեր գործ է: Դա մեծ վստահություն է. որը պետք է իրականացնել:

Վ. Սարգսյանն ասում էր. «Գումարտակի հրամանատարները մեր բանակի սյուներն են. իսկ սյուները պետք է ամուր լինեն: Ես ամեն կերպ կաշխատեմ իրականացնել ինչ տրված վստահությունը: Ընդունելով հրամանատարությունը՝ առաջին հերթին ստուգել եմ զինվորների ֆիզպատրաստականությունը: Ֆիզիկապես առողջ եւ ամուր զինվորի ցուցանիշները. ինչ թվում է. ակնառու կլինեն նաեւ մարտավարական. կրակային. կանոնադրությունների իմացության. հասարակական-պետական պատրաստության պարապմունքներում: Իմ առաջին գործերից մեկն էլ այն է եղել. որ առանցնակի զրույցների միջոցով արդեն 20 զինվոր թողել է ծխելը: Հիմնական աշխատանքը տարվում է ջոկի. դասակի հրամանատարների հետ: Նրանցից շատ բան է կախված: Նրանց կատակով անվանում եմ «թուխսեր». որոնք անընդհատ իրենց թեւերի տակ պետք է պահեն իրենց զինվորներին. փորձեն հասկանալ նրանց հոգեբանությունը. վստահություն ներշնչեն նրանց՝ կիսելով իրենց խոհերն ու մտորումները:

Ուսումնական զորամասերից արդեն ծառայության են եկել ջոկի. դասակի հրամանատարներ. որոնք պետք է փոխարինեն զորացրվող կրտսեր հրամանատարական կազմին: Զորացրվող տղաները իրենց փորձն ու ծառայական հմտությունն են փոխանցում նոր տղաներին: Սերժանտներ Ա. Մարգսյանը. Գալստյանը. կրտսեր սերժանտներ Ն. Հակոբկոխյանը. Գ. Սարդարյանը. Ա. Առաքելյանը. Զ. Ղազարյանը. Հ. Հովհաննիսյանը. Ա. Ասլանյանն արդեն ծառայության մեծ փորձ ունեն եւ կարողացել են ստեղծել փոխադարձ վստահության մթնոլորտ:

-Զորամիավորման հրամանատար գնդապետ-մայոր Լ. Երանոսյանի. զորամասի հրամանատար. գնդապետ Մ. Պողոսյանի հավատը. անմնացորդ նվիրումից է գալիս սերը զինվորի հանդեպ. միեւնույն ժամանակ մեծ պատասխանատվություն ու պահանջկոտությունը սպայական կազմի հանդեպ.-ասում է ավագ լեյտենանտ Վ. Մահտեսյանը:-Ես գիտակցում եմ իմ վրա դրված պարտավորությունը եւ ամեն կերպ կաշխատեմ այն արդարացնել:

Գումարտակի հրամանատարի ծառայության կարճ ժամկետում իրոք եղել են դրական տեղաշարժեր. գործում է հսկիչ անցագրային կետը. կառուցվում է հրամանատարական հարթակը եւ այլն:

Կան շատ անելիքներ: Գումարտակի հրամանատարի առաջնային խնդիրներից մեկն էլ այն է. որ տարածքում անհրաժեշտ է բաղնիք. որովհետեւ տեղացի սաստիկ քամիների պատճառով զորամասից վերադարձող զինվորները փոշում են. հիվանդանում: Բազմաթիվ այլ ծրագրեր. գործեր կան. «Ամեն կերպ կաշխատեմ բոլորն իրականացնել».-հավաստիացրեց հրամանատար Մահտեսյանը:

ԳՆԵԼ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Լուսանկարը՝ ՀՈՎՀ ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ